ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 85/7-Ա «08» 05 2026թ.

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցման ձևերով) ընդունելության կարգի» 10-րդ կետը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. 2026/2027 ուսումնական տարվա առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպել համաձայն հետևյալ ժամանակացույցի.

1) Առաջին փուլ.

ա. փաստաթղթերն ընդունել 2026թ. հունիսի 1-ից հունիսի 26-ը՝ մինչև ժամը 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2026թ. հուլիսի 1-ին,

գ. անվճար և վճարովի ուսուցման տեղերի համար մրցույթի արդյունքներն ամփոփել 2026թ. հուլիսի 3-ին,

դ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2026/2027 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսման վճարի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2026թ. հուլիսի 17-ը:

2) Երկրորդ փուլ.

ա. փաստաթղթերն ընդունել 2026թ. հուլիսի 6-ից օգոստոսի 17-ը՝ մինչև ժամը 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2026թ. օգոստոսի 25-ին,

գ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2026/2027 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսվարձի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2026թ. օգոստոսի 29-ը:

2. 2026/2027 ուսումնական տարվա **հեռակա** ուսուցման ձևով մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպել համաձայն հետևյալ ժամանակացույցի.

ա. փաստաթղթերն ընդունել 2026թ. սեպտեմբերի 7-ից հոկտեմբերի 2-ը՝ մինչև ժամը 18:00,

բ. ընդունելության քննություններն անցկացնել 2026թ. հոկտեմբերի 7-ին,

գ. վճարովի համակարգ ընդունված դիմորդների ուսման վճարի (2026/2027 ուսումնական տարվա յուրաքանչյուր կրթական ծրագրի համար նախատեսված 1-ին կիսամյակի ուսման վճարի առնվազն 25%-ը) վճարման վերջնաժամկետ սահմանել 2026թ. հոկտեմբերի 26-ը:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ ուսումնական ստորաբաժանումներին:

Ռեկտոր՝ Հ. Հովհաննիսյան